

# ՇԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Հիւրասէր է ոչ թէ ան, որ սեղանի կը կանչէ պնակալէզներն ու բարեկամները՝ շնորհ ընելու համար կամ իր փառքին համար, այլ ան որ աղքատները, տնանկներն ու նոթեհները կը հաւաքէ իր տունը, կը կերակրէ ու կը մխիթարէ անոնց՝ առանց փոխադարձ ակնկալութեան: Զուարթուն դէմքն ու քաղցր խօսքերը աւելի կը յագեցնեն հիւրերը, քան բազմախորտիկ սեղանն ու անուշահամ ըմպելիները: Մոլի ու խելագար է այն հիւրընկալը, որ այն դիտաւորութեամբ կը հիւրընկալէ օտարականները՝ որ միայն պատիւ ու մեծարանք մատուցեն իրեն:

Ան որ հիւրերու առջեւ ինքզինք կը մեծարանէ, ոչ միայն իր վարձքը կը կորսնցնէ այլեւ կ'անարգուի որպէս ամբարտաւան: Հիւրն ալ մեծարան տանտիրոջ կամ պիտի գովէ մարդահաճոյ դառնալու համար, կամ լուռ պիտի մնայ ու տմարդի թուի: Աւելի լաւ է քաղցրախօս աղքատի սեղանէն ցամաք հաց ուտել քան թէ մեծարան հարուստի սարքած խնճոքէն՝ համադամ կերակուր:

«Մուրքերուն պէտքերուն հաղորդ եղէք. հիւրասիրութեան ետեւ եղէք:» (Հռոմ 12:13):

ՎԵՐՁ

## ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈՂԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ


### ՈՂԻՆԵՐՈՒ ՀՄԱՅՈՒԹԻՒՆ

Աստուածաշունչին մէջ ներկայացուած է ոգեհմայուլթեան նիստ մը: Սաւուղ թագաւորը մտահոգուած էր, եւ կ'ուզէր գալիք պատերազմին ելքը գիտնալ: Հարցուց Տիրոջ, բայց Տէրը չպատասխանեց՝ ո'չ երազով, ո'չ տեսիլքով, ո'չ ալ մարգարէներու միջոցաւ: Այն ատեն Սաւուղ գնաց Ենդորի ձորը վհուկ կնոջ մը մօտ, եւ պահանջեց որ Սամուէլի ոգին կանչէ: Սամուէլ գետնին տակէ ելաւ եւ Սաւուղին դիմելով ըսաւ. «Տէրը քեզի հետ Իսրայէլն ալ Փղշտացիներուն ձեռքը պիտի մատնէ. վաղը դուն եւ քու որդիներդ իմ քովս պիտի ըլլաք, եւ Տէրը Իսրայէլի բանակն ալ Փղշտացիներուն ձեռքը պիտի մատնէ» (Ա. Թագաւորներու 28:19): Եւ այդպէս ալ եղաւ: Սաւուղ եւ իր որդիները յաջորդ օր սպաննուեցան պատերազմի դաշտին վրայ:

«Արդեօք Սամուէլի ոգին յայտնուեցաւ՝ թէ ոչ»: այս հարցին մէջ կարծիքները կը բաժնուին: Օրինակ, ըստ Լուստերի, Սամուէլի ոգին յայտնուլթիւնը սատանայական ուժերու խաբէութիւն էր, պարզապէս տեսիլք: Անիկա այս մտածումը կը հիմնաւորէ անով՝ որ Աստուած չէր կրնար թոյլ տալ, որ ոեւէ վհուկ անհանգստացնէր Սամուէլի ոգին:



## ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԲԵՌՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴԱՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ՝ 29 ՅՈՒՆՈՒԱՐ, 2012

ԹԻՒ 5

**ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՒՄ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՎԱՆՆԷՍԻ 6.39-47**

**Գ. ԶԿՈՒ ԾՆՆԴԵԱՆ**

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-

«Զիս զրկող Հօրս կամքն է՝ որ չկորսնցնեմ ոչ իսկ մէկը բոլոր անոնցմէ՝ որոնք ինծի տուաւ, այլ յարուցանեմ գայն վերջին օրը: Հօրս կամքը հետեւեալն է. ով որ տեսնէ Որդին եւ հաւատայ անոր՝ յաւիտեանական կեանք կ'ունենայ եւ ես պիտի յարուցանեմ գայն վերջին օրը»:

Հրեաները սկսան տրտնջալ իրեն դէմ, որովհետեւ ըսած էր թէ «Ես եմ երկնքէն իջած հացը», եւ կը հարցնէին. «Այս մարդը Յովսէփի որդին Յիսուսը չէ՞, որուն հայրն ու մայրը կը ճանչնանք. ինչպէ՞ս ուրեմն կ'ըսէ՝ «Ես երկնքէն իջայ»»: Յիսուս անոնց պատասխանեց. «Կը բաւէ դուք ձեզի քրթմնջէք: Ոեւէ մէկը չի կրնար ինծի գալ եթէ զիս զրկող Հայրը գայն ինծի չբերէ. եւ ես պիտի յարուցանեմ գայն վերջին օրը: Մարգարէութիւններուն մէջ գրուած է. «Ամէն մարդ Աստուծմէ սորված պիտի ըլլայ»: Ով որ Հօրմէս կը լսէ եւ իրմէ կը սորվի՝ ինծի կուգայ: Ոչ ոք Հայրը տեսած է, բացի անկէ որ Աստուծմէ է, որովհետեւ միայն անիկա տեսած է Հայրը: Ու ես կ'ըսեմ ձեզի. ով որ ինծի հաւատայ՝ յաւիտեանական կեանքը կ'ընդունի»:

Որպէսզի կարենանք փրկուիլ, անհրաժեշտ է Քրիստոսը հրաւիրել մեր կեանքերուն մէջ ո'չ միայն իբրեւ Փրկիչ, այլեւ իբրեւ Տէր: Շատեր գայն կ'ընդունին իբրեւ Փրկիչ բայց անոր հետ չեն վերաբերիր իբրեւ Տիրոջ: Քրիստոս Փրկիչն է այո՛, բայց միաժամանակ Տէր է: Ան Փրկիչ է՝ որովհետեւ մեզ փրկեց յաւիտեանական դատապարտութենէն, եւ Տէր է՝ որովհետեւ մեզ ազատեց Սատանային տիրապետութենէն՝ որպէսզի ինք ըլլայ մեր Տէրն ու մեր վրայ տիրապետողը: Երբ մէկ կողմէն կ'ընդունինք իր Փրկիչ ըլլալը, բայց միւս կողմէն, մեր կեանքին վերաբերեալ բոլոր որոշումները մենք է որ կ'առնենք, այդ կը նշանակէ թէ Յիսուսի կամքն ու խօսքը չեն որ կը տիրեն մեր կեանքերուն մէջ, այլ մե՛ր կամքն ու խօսքը:

**ՀԱՍՅԷ.**

## ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ

Շաբաթ՝ 28 Յունուարին տուն է Գրիգորի Աստուածաբանին: Ուստի եկե՛ք միասնաբար ծանօթանա՛նք սուրբին:

Եկեղեցւոյ գերագոյն վարդապետներէ մին է Գրիգորը: Կապադովկիոյ Նագիանգ քաղաքէն էր: Որդին էր հեթանոս հօր եւ քրիստոնեայ մօր եւ այս վերջինին ջանքով կանուխ ստացաւ քրիստոնէական դաստիարակութիւն: Յիսուն տարեկանին հայրն ալ մօրը ջանքերով դարձաւ քրիստոնեայ եւ մկրտուեցաւ: Նագիանգու եպիսկոպոսը երբ մեռաւ, Գրիգորիս անունով մէկը կոչուեցաւ նոյն աթոռին եւ ձեռնադրութիւն ստացաւ Կեսարիոյ միեւնոյն եպիսկոպոսապետէն: Գրիգոր Աթենքին մէջ իր ուսմանց ընթացքը աւարտելէ ետք Կ. Պոլսոյ նամբով դարձաւ իր հայրենիքը, միշտ ինքզինքն նուիրելով հոգեւոր պարապումներու:

Գրիգոր իր մօրը մահէն ետք ֆաշտուեցաւ Իսաւրացոց Սելեւկիա քաղաքը, Ս. Թեկղի եկեղեցին: Այդ միջոցին Քրիստոսի եկեղեցին ծանր տագնապ մը կ'անցընէր մասնաւորաբար Արեւելի մէջ, ուր Կոստանդիանոսի մահէն վերջ դարձեալ գորացած էր Արիոսի աղանդը, եւ մայրաքաղաքին հոգեւոր կեանքը գրեթէ բոլորովին անոնց ազդեցութեան տակ էր: 397-ին, Անտիոք գումարուած եպիսկոպոսաց ժողով մը նկատի առնելով այս կացութիւնը, ստիպողաբար յանձնարարեց Գրիգորի՝ Կ. Պոլիս երթալ եւ ուղղափառութիւնը պաշտպանելու համար իր կարելի ընել: Անվարան համակերպեցաւ անիկա այս յանձնարարութեան, եւ կուրծք տալով ամէն կերպ հակառակութեան՝ գորս աղանդաւորները յարուցին իր վրայ, յաջողեցաւ խորտակել անոնց գորութիւնը, իր բարձրօրէն համոզիչ եւ պայծառ վարդապետու-

թեամբ արժանանալով աստուածաբան տիրոջսին: Արիոսեանները, Մակեդոնեանները, Սաբելեանները եւ ուրիշ աղանդներ, ամէնքն ալ սքանչացան իր պերնախօսութենէն: Ամէն կողմ տարածուեցաւ իր համբաւը. Հերոնիմոսի նման գիտուն գուխ մը պատիւ համարեց աշակերտել իրեն: Այն ատեն մեծամասնութիւնը միացաւ եւ իրեն հետ ունենալով Աղեփսանդիոյ Պետրոս պատրիարքի գրաւոր հաւանութիւնը, մայրաքաղաքին եպիսկոպոս կարգեց զինք: Բայց քիչ ետք, նոյնիսկ կարգ մը ուղղափառներու կամակցութեամբ, դարձեալ հակառակութիւն յարուցուեցաւ իր դէմ, եւ փոխանակ իրեն՝ Կ. Պոլսոյ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Մաքսիմոս Աղեփսանդացի: Բայց ժողովուրդը չհանդուրժեց այս անիրաւութեան, եւ բուռն թափով պաշտպանեց Աստուածաբանը: 380-ին երբ Թեոդոս կայսրը Կ. Պոլիս դարձաւ պատերազմներէն, դարձեալ գորացաւ Գրիգորի դիրքը: Յաջորդ տարին, Կ. Պոլսոյ Տիեզերական ժողովին մէջ հաստատուեցաւ եւ յայտարարուեցաւ իր պատրիարքութիւնը: Սակայն կարն ժամանակ ետք յաջողկոտներու երեսէն, հարկադրուեցաւ հրաժարիլ վերջապէս մայրաքաղաքի եպիսկոպոսական աթոռէն եւ Նագիանգի մօտ, Արիագոն գիւղին մէջ ապրեցաւ առանձնական կեանք մը, ինքզինքն նուիրելով եկեղեցական գրականութեան, եւ մեռաւ 389 թուականին: Գրիգորի գործերը բազմաազգայն են: Այս գործերէն կարեւոր մասը թարգմանուած է հայերէնի:

**Հարց.**— Ի՞նչ է ցաշոց գիրքը:  
**Պատասխան.**— Քաղուածներ են Հին եւ Նոր Կտակարանէն, ամէնօրեայ ընթերցումներու համար: **Ճաշոց,** այսինքն՝ ցաշ, հոգեւոր հաց:

## ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

### ՅԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՅՈՒՐԴՆԵՐԸ

#### ՊՍԱԿԻ ԱՍՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Ի՞նչպէս կը կառուարուի պառակի արարողութիւնը:

Մեր եկեղեցւոյ մէջ պսակ կատարելու իրաւունքը եկեղեցականին է: Պսակուողները եկեղեցի կու գան: Աստուծոյ եւ Հարսնեւոր ժողովուրդին դիմաց քահանան կը Հարցաքննէ գանձը, թէ իրենց ազատ կամքով եկած են պսակուելու եւ Հաստատական պատասխան ընդունելէ յետոյ, անոնց աջ ձեռքերը, ինչպէս նաեւ ճակատները իրար կը միացնէ, կը խրատէ, կ'աղօթէ եւ կ'օրհնէ անոնց միութիւնը:

Ամուսնութեան պայմաններն են. առողջ եւ անթերի մարմին, չափահասութիւն, կանոնական Հասութիւն, ազգային եւ կրօնական նոյնութիւն, փոխադարձ յօժարութիւն եւ սէր:

Կանոնական Հասութիւն կը նշանակէ ազգականական որոշ աստիճան: Ամուսնացողներ, իբրեւ պայման սերունդ մը յառաջ բերելու, ազգականութեամբ կամ արիւնով որքան հեռու ըլլան իրարմէ, այնքան յարգած կ'ըլլան Եկեղեցւոյ կանոնները, որոնք հիմնուած են առողջապահական սկզբունքներու վրայ: Հին կանոններով մանչ մը եօթը պորտ կամ եօթը ճիւղ կամ եօթը աստիճան հեռու պէտք է ըլլայ իր առնելիք աղջիկէն: Կենցաղի նոր Հարկադրութեանց ներքեւ Հոգեւոր վերին իշխանութեան կողմէ թոյլատրուած է ազգականական աստիճանը իջեցնել մինչեւ հինգ:

## ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

### ՅՈՒՍԱՐԱՏ ԵՍ, ԴԻՍԷ՝ ՏԻՐՈՋ ՍԱՂՄՈՍ 28

Տէ՛ր, օգնութիւն կ'ուզեմ քեզմէ: Դո՛ւն ես իմ պատասխանս. աղանջներդ մի՛ փակեր. լուռ մնալը պատճառ կ'ըլլայ որ ես ողջ-ողջ գերեզման իջնեմ:

Լսէ՛ խնդրանքս, երբ որ քեզմէ օգնութիւն կ'աղերսեմ, երբ ձեռքերս դէպի սուրբ տաճարդ կը բարձրացնեմ:

Ձիս մի՛ դասեր ամբարիշտներուն հետ: Անոնց՝ որոնք չարիք կը հասցնեն ուրիշին, որոնք իրենց խօսքերուն մէջ սիրալիր են մարդոց հետ, մինչ իրենց սիրտերուն մէջ չարութիւն կայ:

Պատուհասէ՛ գանձը իրենց գործերուն համաձայն, տո՛ւր արժանի պատիժը իրենց չարսիրտ վարմունքին. իրենց ըրածին համեմատ վարուէ՛ իրենց հետ, հատուցանելով իրենց այն՝ ինչ բանի որ արժանի են:

Քանի որ անոնք կ'արհամարհեն Տիրոջ գործը եւ ինչ որ ան ստեղծեց, Տէ՛րը գանձք պիտի կործանէ այնպիսի ձեռով՝ որ ալ երբեք չկանգնին:

Օրհնեա՛լ է Տէ՛րը, որ աղօթքիս պատասխանեց:

Զօրութիւնս է ան եւ իմ պաշտպանս. ես իրեն կը վստահիմ. իրմէ կու գայ օգնութիւնս եւ իմ սիրտս կը ցնծայ. հետեւաբար իմ երգովս անոր գոհութիւն պիտի յայտնեմ:

Տէ՛րը իր ժողովուրդին գորութիւնն է եւ իր օծեալին ապաւէնն ու փրկիչը:

Տէ՛ր Փրկէ՛ եւ օրհնէ՛ քու ժողովուրդդ, որ քու ժառանգութիւնդ է. դուն հովուէ՛ գանձը եւ ուսիղ առած առաջնորդէ՛ մինչեւ յաւիտեան:

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ**

**62.1-12**

Ուստի պիտի չլռեմ, Սիոնի սիրոյն, անդադար պիտի աշխատիմ Երուսաղէմի համար, մինչեւ որ անոր արդարութիւնը ծագի լոյսի պէս եւ անոր փրկութիւնը փայլատակէ ջահի մը պէս: Այն ատեն հեթանոսները պիտի տեսնեն արդարութիւնը, ո՛վ Երուսաղէմ, բոլոր թագաւորները պիտի տեսնեն ինչ փառքի եւ ինչ պիտի կանչեն նոր անունով մը: Տիրոջ ձեռքին մէջ վայելչութեան պսակ մը պիտի ըլլաս եւ Աստուծոյ ձեռքին մէջ՝ արքայական թագ:

Այլեւս բնաւ “Լեւուծ կին” պիտի չկոչուիս, ոչ ալ երկիրդ “Աւերակ” պիտի անուանուի. այլ ես ինչ “Նախասիրածս” պիտի կոչեմ, իսկ երկիրդ՝ “Բնակուած Շէն”, որովհետեւ Տէրը պիտի հաւանի ինչի եւ երկիրդ բնակութեամբ պիտի խոնուի:

Ինչպէս երիտասարդ մը եւ կոյս մը նոր ընտանիք կը կազմեն, այնպէս ալ գաւազներդ ինչի հետ նոր ընտանիք պիտի կազմեն. եւ ինչպէս փեսան հարսով կ’ուրախանայ, այնպէս ալ Աստուծոյ ինչի պիտի ուրախանայ:

Ո՛վ Երուսաղէմ, պարիսպներուդ վրայ պահապաններ կարգեցի, որոնք անդադար գիշեր-ցերեկ Տիրոջ պիտի աղաղակեն:

Մի՛ լռեմ, ո՛վ աղօթողներ, հանգիստ մի՛ տաք Աստուծոյ, մինչեւ Երուսաղէմը վերականգնէ եւ գայն երկրի պարծամքը դարձնէ: Տէրը հետեւեալ երդումը ըրաւ, որ պիտի կատարէ իր փառքով եւ գորաւոր բազուկով. «Այ բնաւ ցորենդ թշնամիներուդ պիտի չտամ՝ որպէս կերակուր, օտարներու գաւազները պիտի չխմեն գինիդ՝ որուն համար դուն աշխատեցար. այլ դո՛ւն պիտի հնձես ու վայելես ինչ բերքդ եւ փառք տաս Տիրոջ, այգեկութե՛ք պիտի ընես ու դուն խմես գինիդ սրբարանիս սրահներուն մէջ»:

Ուստի դուրս թող գան բնակիչներդ, ո՛վ Երուսաղէմ, որպէսզի ցամաքները պատրաստեն, շաւիղները հարթեն եւ ցամաքայ բանան վերադարձող իմ ժողովուրդիս, մաքրեն ցամաքները քարերէն եւ հեթանոսներուն տանին Տիրոջ նըշանը. որովհետեւ ահա Տէրը իր ձայնը լսելի դարձուց մինչեւ աշխարհի ծայրերը ըսելով. «Ըսէ՛ք Երուսաղէմի բնակիչներուն.՝ Ահա Փրկիչդ կու գայ հետը բերելով իր շահած ժողովուրդը, անոնք՝ որ ինք փրկեց»:

Անոնք “Սուրբ ժողովուրդ” կոչուին, կամ “Տիրոջ Փրկածները”, իսկ դուն ո՛վ Երուսաղէմ, պիտի կոչուիս “Ցանկալի”, նաեւ “Քաղաք՝ որ Տէրը չլքեց”:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԵ  
ՏԻՍՈՒԹԵՈՍԻ ԳՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ  
ՆԱՍԱԿԵՆ  
2. 15-19**

*Աշխատէ, որ Աստուծոյ աչքին ըլլաս այնպիսի մշակ մը՝ որ իր գործերուն համար ամէնալիք բան մը չունի, որպէս մէկը՝ որ ուղիղ կերպով կ’ուսուցանէ Աստուծոյ ճշմարիտ պատգամը:*

*Հեռու կեցիր հաւատքի ճշմարտութիւնները խեղաթիւրող պարապ վիճաբանութիւններէ, որոնք մարդիկը Աստուծոյ հեռացնելու կը ծառայեն միայն: Այդպիսի խօսքերու ձգած թոյնը քաղցկեղի պէս կը կրծէ մարդս: Այդպիսի խեղաթիւրող վիճասէրներ էին Հիմնոս եւ Տիլետոս, որոնք ճշմարտութենէն շեղեցան եւ շատերու հաւատքը քանդեցին, ըսելով թէ մեռելներու դրած հաստատուն հիմը կանգուն կը մնայ: Անոր վրայ գրուած է. «Տէրը կը ճանչնայ անոնք որոնք իրն են», եւ «Ով որ Տիրոջ կը պատկանի՝ թող հեռու մնայ անիրաւ գործերէ»:*